

**ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ Է. Ս.

ՀՀ կրթական նոր համակարգի համաձայն, 2006-2007 ուստարվանից դպրոցներում սկսեց գործել 12-ամյա ուսուցումը: Դրա հետեվանքով առաջացան «թռչափայլի նախադասներ», դպրոցի կառուցվածքը փոփոխվեց, այսինքն, եթե նախկինում դպրոցական միջին տարիքն ընդգրկում էր V-VIII դասարանները, ապա այժմ այն ներառում է V-IX դասարանները, առարկայացանկի, դրան գուգահեռ՝ նոր առարկայական ուսուցիչների ավելացումը, գնահատման համակարգի փոփոխությունը. նախկին 5-ի փոխարեն՝ այժմ դպրոցականները գնահատվում են 10 բալանոց սանդղակով:

2007 թ. աշնանը ձևավորվեցին առաջին «թռչափայլի դասարանները», միաժամանակ, դեռահասներն արդեն միջին դպրոցում բախվեցին մի շարք խնդիրների, ինչպիսիք են՝ ավելի բարդ առարկաներով հագեցած առարկայացանկի (մինչև IV դասարանը առարկաները չէին գերազանցում 8-ը, V-ում և VI-ում՝ 17-ը, VII-ում՝ 24-ը, VIII-ում՝ 28-ը, իսկ IX դասարանում՝ 26-ը)՝ նոր առարկայական ուսուցիչների ավելացումը և այլն: Այս գործոնները լուրջ խնդիրներ և խոչընդոտներ են ստեղծում դեռահասների ուսումնական գործընթացներին հարմարվելու ճանապարհին: Ընդհանրապես հարմարումը համարվում է ակտիվ գործընթաց ինքնագարգացման համար: Դեռահասները համարվում են ուսումնական գործունեության սուբյեկտ, սակայն կրտսերից միջին, միջինից ավագ դպրոց անցումները սոցիալ-հոգեբանական հարմարման տեսանկյունից դպրոցականներից մեծ ջանքեր են պահանջում և մինչ օրս քիչ են ուսումնասիրված:

Կարելի է ասել, որ հարմարման հիմնախնդրի առաջացումը միանշանակ և տեսական կամ գործնական կոնկրետ հիմք չունի՝ հատկապես դեռահասների մեջ: Աշակերտների արագ հարմարմանը կարող են նպաստել և՛ մանկավարժները, և՛ ծնողները: Նրանք պետք է լավ ծանոթ լինեն համապատասխան տարիքի երեխաների անհատական առանձնահատկություններին, որպեսզի իրենց գործունեությունը ծավալեն աշակերտների ունակություններին և կարողություններին համապատասխան:

Ըստ հոգեբան Լ. Ֆիլիպսի՝ հարմարման բոլոր տարատեսակները պայմանավորված են ինչպես ներհոգեկան, այնպես էլ միջավայրային գործոններով: Արդյունավետ է այն հարմարումը, որի շնորհիվ անձը բավարարում է հասարակության նվազագույն պահանջները և սպասելիքները¹:

¹ <http://www.bankrabort.com/work/work> <http://Адаптации подростков к инновационным условиям обучения>.

Հոգեբան Ֆ. Բերյոզինը հոգեբանական հարմարման կազմակերպումը ներկայացնում է 3 հայեցակետով. սոցիալ-հոգեբանական, որը դրսևորվում է հասարակական նվազագույն (միկրոսոցիալ) համագործակցության ժամանակ, գուտ հոգեբանական, որի նպատակը հոգեբանական հումեոստազի պահպանումն է, հոգեֆիզիոլոգիական, այն է՝ հոգեֆիզիոլոգիական վիճակների լավագույն կազմակերպում, մարմնական առողջության պահպանում²: Սոցիալ-հոգեբանական հարմարվողականությունը կարելի է բնութագրել որպես անձի և խմբի համագործակցության վիճակ, երբ անձը առանց ներքին և արտաքին երկարատև կոնֆլիկտների, արդյունավետորեն իրականացնում է իր առաջնային գործունեությունը, բավարարում է սոցիոգեն պահանջումները, ընդառաջ է գնում այն դերային սպասումներին, որոնք խումբն է դնում իր առջև:

Հոգեբանական հարմարման դերը ուսումնական գործընթացում մեծանում է այնքանով, որքանով մեծանում են այդ գործունեության մասին գիտելիքները: Իրավիճակների շրջանակի լայնացումը հանգեցնում է հոգեբանական հարմարման մեխանիզմի կիրառմանը: Սովորաբար դեռահասության շրջանում է տեղի ունենում սոցիալական նորմերի, արժեքների և վարքի չափանիշների յուրացումը: Հենց այս տարիքում են ձևավորվում շփման նորոյթները, մասնագիտական, զբաղվածության և ընտանեկան կյանքի պայմանները: Եթե այս կամ այն պատճառով դեռահասի հարմարման գործընթացները սոցիալական նորմերից շեղվում են, ապա կյանքի հետագա տարիների համար զարգացման հապաղման հնարավորությունը մեծանում է: Թույլ հարմարումը դիսֆունկցիոնալ վիճակ է, որը կարելի է դիտել որպես անցում ապահարմարվողականության (դեզադապտացիայի): Թույլ հարմարումը կարիք չունի հոգեշտկողական կամ վերականգնողական աշխատանքների:

Կրտսերից միջին դպրոց անցնելիս աշակերտները բախվում են հարմարման դժվարությունների: Դրանք նման են այն դժվարություններին, երբ երեխան նոր պետք է դպրոց գնա և հարմարվի դպրոցական պայմաններին, ուսումնական գործընթացին: Դրա հետևանքով բարձրանում է տազնապայնությունը, ընկնում՝ աշխատունակությունը, բարձրանում՝ մոռացկոտության, անկազմակերպվածության աստիճանը և այլն: Դեռահասը հարմարման մեկ այլ դժվարության է բախվում նաև հանրակրթության բարեփոխված համակարգերի հետևանքով, և հասկանալի չէ՝ այս համակարգին հարմարվելը նման է կրտսերից միջին դպրոցի անցման ժամանակ առաջացող հարմարվելուն, թե՞ ոչ:

Պրոբլեմային իրավիճակների հաղթահարման յուրաքանչյուր գործընթաց կարելի է համարել անձի սոցիալ-հոգեբանական հարմարման գործընթաց, որի ընթացքում անձնօգտագործում է զարգացման նախկին փուլերում ձեռք բերած սոցիալական նորոյթները, վարքի մեխանիզմները կամ բացահայտում է վարքի նոր հնարավորություններ և խնդրի նոր լուծումներ, նոր ծրագրեր և ներհոգե-

² Նույն տեղում:

կան գործընթացների պլաններ: Երբ փոխվում է անձի գործունեության տեսակը, սոցիալ-հոգեբանական հարմարման հիմնախնդիրը առաջնային է դառնում³:

Շատերի հարմարվողական բարդությունները 2-3 շաբաթից վերանում են: Բայց կան երեխաներ, որոնք ունեն շատ գործառնական հապաղումներ, և որոնց հարմարումը ձգձգվում է 2-3 ամիս⁴: Հարմարվելու դժվարություններ է առաջացնում նաև այն հանգամանքը, որ V դասարանցիներին և միջին դպրոցում սովորող մյուս տարիքի աշակերտներին ուսուցիչները նույն կերպ են վերաբերվում՝ նրանց ներկայացնելով նմանաբնույթ պահանջներ⁵:

Դպրոցական ապահարմարվողականության պատճառները կարող են տարբեր լինել և դրսևորվել տարբեր ձևերով: Դեռահասների ապահարմարվողականության հիմնական գործոններից են նրանց տարիքային առանձնահատկությունները: Կրտսեր դեռահասների պարագայում դրանք պայմանավորված են նրանց համար կարևոր մարդկանց հետ շփման կորստով՝ տարրական դասարանների ուսուցիչներ, հասակակիցներ (դասարանի նոր կազմ) և այլն: Այս անհանգրստությունները կարող են ավելի ուժեղանալ, երբ բացակայում է ծնողների փոխհասկացվածությունը: Ապահարմարվողականության հավանականությունը մեծանում է, երբ դեռահասը կորուստները փոխհատուցում է «հակասոցիալական (ասոցիալ) ոլորտի օգնությամբ»:

Դեռահասների սոցիալ-հոգեբանական հարմարումը կրթության նոր պայմաններին իր իրականացման համար հոգեբանական հոմեոստազի պահպանման և վարքի հստակ նպատակաուղղվածության, մյուս մասնակիցների գործունեությունների հետ համարժեք համագործակցության (սոցիալ-հոգեբանական հայեցակետ), հոգեբանական և ֆիզիոլոգիական հարմարվողական գործընթացների միջև իրական համագործակցության «պահանջ ունի»:

Եթե անհատի հնարավորությունները և իրեն ներկայացվող պահանջները շատ տարբեր են, ապա կարելի է ասել, որ առաջանում է հոգեֆիզիոլոգիական և հոգեբանական հարմարումների կարգավորման գործառույթների խախտում, որն էլ անդրադառնում էլ սոցիալ-հոգեբանական հարմարման արդյունավետության վրա:

Ըստ բժշիկ Ա. Լիչկոյի՝ դեռահասների ապահարմարվողականությունը կապված է հոգեկանի խանգարման հետ: Մակայն հետազոտությունները ցույց են տվել, որ դպրոցներում հիմնականում սովորում են աշակերտներ, որոնց նմանատիպ խանգարումները ծայրահեղ աստիճանի չեն հասել, բայց գտնվում են սահմանային վիճակում: Ուշ դեռահասության տարիքում առաջանում է խորքային հաստատուն ապահարմարվողականություն. երկար ժամանակ պա-

³ http://bank.orenipk.ru/Text/t28_218.htm/ Социальная дезадаптация подростков.

⁴ Дубровина И. В., *Практическая психология образования*, СПб., 2007, с. 387.

⁵ Նույն տեղում, էջ 382:

րապել չկարողանալուց ուսուցման մեջ սկսվում են անհաջողություններ, և դեռահասը խուսափում է ստուգողականներից, բաց է թողնում դասերը: Դեռահասների հասարակականացման, ինքնազարգացման և ինքնահաստատման ճանապարհին մեծ ծանրաբեռնվածությունը նույնպես կարող է հանգեցնել ապահարմարվողականության առաջացման: Երբեմն առաջանում է արհեստական դեպրիվացիա, որը սահմանափակում է դեռահասների գործունեության որոշ տեսակներ՝ սպորտով զբաղվելը, դասերի հաճախումներից ազատվելը և այլն: Այս ամենը ստեղծում է ուսուցման բարդություն, խախտվում է դեռահասների կապը հասակակիցների հետ, խորանում է անլիարժեքության զգացումը, սահմանափակվում է հետաքրքրությունների շրջանակը, փոքրանում են ունակությունները դրսևորելու հնարավորությունները:

Դեռահասների ապահարմարվողականության առաջացման մյուս գործոնը համարվում է ռեֆերենտ խումբը: Այն բավարարում է դեռահասների շփման և պատկանելության պահանջը: Այստեղ արդեն խոսքը ոչ թե ուսումնական, այլ զուտ սոցիալական միջավայրում դեռահասների հարմարվողականությանն է վերաբերում: Այսինքն՝ խմբի անդամները կարող են ազդել դեռահասների գործունեության վրա:

Անշուշտ, կրթական բարեփոխումներն անհրաժեշտ և կարևոր քայլ են ցանկացած երկրում, իսկ դրանց արագ հարմարվելը նաև տվյալ երկրի շահերից է բխում: Դեռահասների հարմարումը կրթական նոր համակարգերին կարող է ավելի արագ ընթանալ, եթե նրանց օգնեն, աջակցեն, ըմբռնում ցուցաբերեն և՛ ծնողները, և՛ ուսուցիչները, և՛ կոլեկտիվը, և՛ ռեֆերենտ խումբը:

Դեռահասների՝ նոր կրթական համակարգին սոցիալ-հոգեբանական հարմարվողականության վերաբերյալ մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կրթական նոր համակարգերը դեռահասների սոցիալ-հոգեբանական հարմարման ցուցանիշներում առաջացնում են բացասական փոփոխություններ, որոնց հետևանքով նվազում է նրանց առաջադիմությունը: Կիրառելով Կ. Ռոջերսի և Ռ. Դայմոնդի «Սոցիալ-հոգեբանական հարմարման ախտորոշման» մեթոդիկան (թեստավորում և վերաթեստավորում տարբերակով) և ուսումնասիրելով VIII և IX դասարանի դասամատյանների առաջին կիսամյակի գնահատականները՝ հետազոտության ընտրանք հանդիսացած «թռիչքային» VIII, ապա IX դասարանում սովորող 50 դեռահասների մեջ նկատել ենք փոփոխություններ նոր կրթական համակարգին հարմարվելու ընթացքում⁶:

Ամփոփելով տվյալները՝ կարող ենք նշել, որ VIII և IX դասարաններում սովորող դեռահասների մեջ հիմնական փոփոխությունները նկատվում են հարմարման և այլ մարդկանց նկատմամբ համակրանքի (IX դասարանում աստիճանն իջել է), ինտերնալության և գերակայելու ձգտման ցուցանիշներում (IX դասարանում աստիճանը

⁶ Психодиагностика персонала. Методика и тесты, т. 1, Самара, 2007,

բարձրացել է): IX դասարանում բարձրացել են հուզական հարմարավետության և սեփական Ես-ի նկատմամբ համակրանքի աստիճանները:

Ենթադրում ենք, որ հարմարվածության աստիճանի անկման պատճառ կարող է լինել այն հանգամանքը, որ IX դասարանում դեռահասների համար կրթական ոլորտում նոր փոփոխություններ չեն կատարվել, և նրանք հարմարման ոչ մի բարդության առջև չեն կանգնել, իսկ VIII դասարանցիները դեռ ծանոթ չէին կրթության, հատկապես հանրակրթության ոլորտում ընդունված նոր կրթակարգերին և փոփոխություններին, քանի որ այդ բարեփոխումները ՀՀ հանրակրթության ոլորտում դեռ նոր էին ընդունվել: Կարող ենք ասել, որ IX-ում սովորողներն արդեն հարմարվել են կրթական նոր համակարգերին: Իսկ դասամատյանի գնահատականներն ընդհանրապես վկայում են դեռահասների առաջադիմության անկման մասին:

Այսպիսով, կրթական նոր համակարգը դեռահասների մեջ առաջացնում է բացասական փոփոխություններ՝ հուզական աններդաշնակության, գերակայության ձգտման աստիճանի անկում և որպես հետևանք՝ առաջադիմության աստիճանի նվազում:

РЕФОРМА ОБРАЗОВАТЕЛЬНОЙ СИСТЕМЫ И СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКАЯ АДАПТАЦИЯ ПОДРОСТКОВ

МАТЕВОСЯН Э. С.

Резюме

В любом развитом либо развивающемся государстве периодически проводятся реформы в сфере образования, которые считаются необходимым и неизбежным явлением. Изучение особенностей процесса социально-психологической адаптации подростков в рамках новой образовательной системы выявляет как позитивное, так и негативное влияние образовательных реформ на уровень социально-психологической адаптации и дезадаптации подростков.